

թեան սիրոյն՝ որ գիտել կու տայ: Գերմանացիք իրենց անխոնջ երկայնմտութեամբը իմաստասիրութեան ամենաբարձր ճշմարտութիւնքը հետազոտելով վերջի ժամանակներս մեծ ծառայութիւններ ըրած են մարդկութեան. իրենց խորհող մտօքը քայլ առ քայլ մոտաց ամենանուրը շարժմանցը ետեւէն կ'երթան, աշխարհիս վարիչ բարոյական մեծ օրէնքները կը պարզեն, և այսպէսով իրենց հարկը կը հատուցանեն այն Եւրոպիոյ՝ որ տիեզերաց միւս մասանցը կ'առաջնորդէ: Գերմանացիք, երկայնամիտք ուսումնական հետազոտութեանց մէջ և ամեն մեծ մտածութեանց եռանդուն հետամուտք, աւելի մեծ վարդապետութեանց մէջ որ առանձին լնտանեաց մէջ շահաւոր կերպով օգտեցնել գիտեն. բայց ուրիշ երկու ժողովրդոց նման, անանկ եռանդուն գործունէութիւն մը չունին որ կարենան մարդկութեան մեծ լնտանեաց առաջնորդ ըլլալ: Սակայն յինքեանս շատ ազնիւ յատկութիւն մը կը բովանդակեն, որ է մտաց ճգամբք իրենք զիրենք լաւցընել: Այսպէս մինչդեռ աշխարհիս առաջնորդ եղող մեծ ժողովուրդներ կանկ առած են, իրենք ճշմարիտ յառաջադիմութք դէպ ՚ի լաւագոյն ապագայ մը կը քալեն: Իրենց ամենէն արդի առածները գեղեցկագոյններն են, վասն զի խորհող ժողովրդեան մը արդիւնք են, որ պատերազմող ազգի մը յաջորդեր է: Կին մը որ իր սրտովը և հանճարովը սկսաւ ուրիշ ազգաց ճանչցընել զմեղ, քանի մը առածներ ստեղծեր է՝ որ քիչ բառով ըլլաւորութիւննիս կը բացատրեն:

Գերմանացիք մտածութեան բովագործքն են. մարդկային ազգին մտաւորական ճոխութիւնները լւելեայն կը քննեն:

Ճիկին ՍԴԱԵԼ.

Հսած է նմանապէս.

Ի Գերմանիա՝ ամենայն բանի մէջ խղճմտանքով կը վարին. և յիրաւի անկէ դուրս բան մը չիպատահիր:

Եւ համոզուած եմ թէ ատիկայ է որ այնչափ մարդիկ յարուցած է այդ երկրիս մէջ, որ մարդկութեան խոկ պատիւ կ'ընեն:

Սա մէկ քանի առածները զրէ, աւելցուց գերմանացի գիտունը, որոնց վրայ խորհրդածելը քեզի կը թողում:

Հին ծառերը շատ աւելի գժուարութեամբ կը ծըսին:

Համեսս մարդուն ժառանգութիւնը ամեն աշխարհի մէջ է:

Պարոքը առաւօտանց կանուն՝ հացագործէն շատ աւելի առաջ առւն կը մանէ:

Խորհրդոց մէջ խխունն եղիր, գործոյ մէջ թռչուն: Բնութիւնը աւելի ուժով կը քաշէ քան թէ եօթնեզ:

Մը իններն ալ քէն ունին:

Ամեն մարդ ոտքերը աղքատութեան վրայ սրբել կ'ուզէ:

Հաւեկթը վառեակէն աւելի գիտնալ կ'ուզէ:

Սկիզբը գործին կէսն ըսել է:

Ի դոյնը համելի է:

Ծերութիւնը՝ օրացոյցը մարմնոյն վրայ կը կրէ:

Բախտը կոյր է և կը կուրացնէ:

Նախանձը կարիճ մըն է, ճնքզնքը կը փարատէ:

Այն որ ամեսուին կը ծառայէ գէշ տէր մ'ունի:

Ու որ հետու ճամբորգութիւն կ'ընէ շատ ասաղ կը փոխէ, բայց ոչ թէ խելքը:

Ուսեալ Գերմանացին այս երկու վարի առածներովս լմբնցուց, որք մեծ ճըշմարութիւն մը և խմաստուն խորհուրդ մը կը բավանդակեն.

Կարօտութիւնը մայր է արհեստից:

Աղքատութիւնը անոնց մօրուն է:

Կը շարունակուի:

ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷԶ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳԱՒԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԵ

(Տես Երես 122:)

ԳԼՈՒԽ ԺԹ.

Նեղոսը. — Երերացող լուղ. — Երկրին յիշատակը. — Արարացոց պատմուրիւնները.

— Նիսամ-Նիսամքն. — Ճոյին իմաստունիորհրածորիւնները. — Վիկտորիան աստանդերով կը ձահապարհորդէ. — Օդաչուվերելքն. — Տիկինն Պլանչար:

— Ի՞նչ ուղղութեամբ կը ճանապարհորդենք, հարցուց Քէննը տեսնելով

որ իր բարեկամը ուղղեցուցին կը նա-
յէր :

— Դէպ 'ի հիւսիսային արևմտեան
հիւսիս :

— Թշուառութեանս . բայց ատիկայ
հիւսիս չէ :

— Ոչ Տէք , և կարծեմ որ մեծ դը-
ժուարութիւն պիտոր կրենք կոնտոքորո
հասնելու . կը ցաւիմ ատոր վրայ , սա-
կայն գոնէ արևելեան հետազոտու-
թիւնները հիւսիսային հետազոտութեց
հետ շաղկապեցինք , որով մեղաղիր ըլ-
լալու շենք :

Վիշտորիան կամաց կամաց Նեղո-
սէն կը հեռանար :

— Ցետին հայեցուածք մը տանք ,
ըսաւ տոքդորը , այդ անանցանելի լայ-
նութեան , ուսկից ոչ ոք արի ճանա-
պարհորդներէն կարող եղեր է անդին
անցնիլ : Ահա այդ անամնքելի ժողո-
վուրդներն , զորոնք նշանակեր են թեթե-
րէք , տ' Առնօ , Միանի , և այն երիաա-
սարդ ճանապարհորդն պարոն Լըժան ,
որուն պարտական ենք վերի Նեղոսի
վրայ գրած լաւագոյն դրուածքներուն :

— Այսպէս ուրեմն , հարցուց Քէն-
նըտի , մեր զիւտերը դիտութեան կան-
խաղդմանց հետ համաձայն են :

— Ամենեին համաձայն : Սպիտակ
գետին , Նահր-էլ-Ապիատին , աղբերա-
կունքը , ծովու նման մեծ լճի մը մէջ
ընկղմած են . անկէց է իր ծագման աղ-
բիւրը . քերթութիւնն անտարակոյս իր
աշխուժէն շատ կորանցունէ պիտի . ա-
խործելի էր միշտ այս գետոց արքային
երկնային ծագում մը ենթադրել . նախ-
նիք անոր Ովկէան անունը կու տային ,
և գրեթէ հաւատք էր իրենց մէջ , ինչ-
պէս թէ ուղղակի արևուն մէջէն հոսէր .
պէտք է երբեմն երբեմն դիտութեան
մեզի սորվեցուցածէն ընտրութիւն ընե-
լով ընդունիլ ու մերժել . գուցէ դիտուն
մարդիկ միշտ չգտնուին , այլ քերթողք
միշտ գտնուելու են :

— Դեռ ևս ուրիշ սահանքներ ալ կը
տեսնուին , ըսաւ ձ՛ոյ :

— Մաքետոյի սահանքներն են , լայ-
նութեան երեք աստիճանին տակ : Աս-

կէ աւելի ճիշտ բան չիկրնար ըլլալ : Ի՞նչ-
պէս չկրցանք քանի մը ժամ Նեղոսի
ընթացքին վրայէն քալել :

— Հոն վարերն ալ առջենուս , ըսաւ
որսորդը , լերան մը գագաթը կը տես-
նամ :

— Լոկվէք լեռն է , Արաբացւոց դող-
դողացող լեռ ըսածը . պարոն Տէպօնօ ,
Լազիֆ Լֆէնտի անուամբ այս կողմերս
ճանապարհորդելով , պտըտեցաւ : Նեղո-
սի մօտ բնակող ցեղերը մէկմէկու ոխե-
րիմ թշնամի են ու շարունակ պատե-
րազմաւ մէկզմէկ կը ջարդեն : Կրնաք
հեշտեաւ ըմբռնել թէ ինչպիսի վտանգ-
ներէ անցած պիտոր ըլլայ :

Հովն այն ատեն զվիկտորիան դէպ
'ի հիւսիսի արևմտեան դին կը տանէր :
Լոնկվէք լեռնէն հեռանալու համար
հարկ եղաւ աւելի խոտոր ուղղութեամբ
հոսանք բնտուել :

— Բարեկամք , ըսաւ տոքդորն իր ըն-
կերներուն , ահա հիմա կը սկսինք իրա-
պէս Ափրիկէի մէջէն անցնիլ . մինչեւ
հիմա զվասւորապէս մեր յառաջն-
թացներուն հետոցը հետևեցանք : Ա՛լ
ասկէ ետքը անծանօթին հետամուտ
կ'ըլլանք : Արդեօք արիութիւննիս պակ-
սի պիտոր :

— Ոչ երբեք , կանչեցին միաբերան
Տէք և ձ՛ոյ :

— Հապա , ճամբայ ուրեմն , և եր-
կինքն ըլլայ մեզի օգնական :

Իրիկուան ժամը տամնին , խոխոմնե-
րու , անտառաց և ցիր ու ցան գիւղից
վրայէն՝ ճանապարհորդք երերացող լե-
րան կողերը հասան , որուն մեզմ զառ-
իվերներուն քովէն կը քերէին :

Այդ ապրիլի 23դ յիշատակաց օրը ,
տասնըհինգ ժամու ճամբորդութենէ
ետքը , երագաշունչ հովու մը մղերզին
երեք հարիւր տասն և հինգ մղոնի¹ մի-
ջոցէ աւելի քալած էին :

Սակայն այս ճամբորդութեն ետքի մա-
սը տխուր տպաւորութին մ'ըրեր էր վրա-
նին . խոր լուսութիւն մը տիրերէր նաւա-
կին մէջ : Արդեօք տոքդոր Ֆէրկըսն իր

¹ Հարիւր քանառուհինդ փարստիկ աւելի :

բրած զիւտերմւն մէջ ընկղմած էր. Արդեօք իր երկու ընկերներն այն անծանօթ երկիրներուն մէջէն անցնելնին կը մտածէին: Անշուշտ այս ամենը Անդզիոյ ու հեռոի բարեկամաց քաղցր յիշատակաց հետ խառն կը գտնուէին: Ճոյ միայն անհոգ վիլիսոփայութեան մը ցոյց կու տար, շատ բնական գտնելով որ հայրենիքը հեռոի ըլլալուն պատճառաւ՝ չէր կրնար հոն տեղ գտնուիլ. սակայն Սամուէլ ֆէրկը ընի և Տիգրէն նըտիի լուութենէն ակնածելով լուռ կեցաւ:

Իրիկուան, ժամը տասնին վիկտորիան լերան՝ միւս կողմը խարիսխը նետած դադարած էր. գոյացական կերակրիկ մը կերան և յաջորդաբար ամենը քուն մտան՝ մէկին հսկելովը:

Երկրորդ օրն աւելի զուարիթ դաղափարներով արթնցան. գեղեցիկ օդ մը կ'ընէր, ու հովս աղէկ կողմէն կը չնչէր. ախորժահամ նախաճաշ մը, զոր ձոյ իր զուարիթամութեամբը շատ զուարճալի ըրաւ, վերջապէս ամենը զուարթացուց:

Այս ատենս իրենց քալած երկիրն անհուն ընդարձակութեամբ է. թէ ուսնի և թէ ջարֆուրի լերանց սահմանակից, և գրեթէ եւրոպայի մեծաւթեամբ ընդարձակութիւն ունի:

— Անշուշտ, ըսաւ տողդժրը, Ուզոկալի ենթադրեալ թագաւորութեան մէջէն կ'անցնինք. աշխարհագիրներէն ոմանք ըսեր են թէ Ափրիկէի կեդրոնը մեծ փոս մը կամ թէ անհուն լիճ մը կայ. Տեսնենք պիտի թէ այդ ենթադրութիւն ունի:

— Սակայն ինչպէս կրցեր են այդպիսի ենթադրութիւն մը ընել, հարցուց, Քէննըտի:

— Արաբացւոց պատմածներէն: Այդ մարդիկ շատ առասպելախօս են, թերեւս շափաղանց առասպելախօս: Ճանապարհորդք ոմանք քաղէն կամ Մեծ լճերն հասնելով, կեդրոնական երկիրներէն

եկող գերիներ տեսեր են, իրենց երկրին վրայ հարցմունքներ ըրեր են անոնց, և այդ այլ և այլ վկայութեանց հաւաքածոյ մը ընելով, անկէ զրութիւններ հետեցուցեր են: Այս ամեն բանի մէջը միշտ ստոյգ բան մը կայ, և դուք կը տեսնես, Նեղոսի ծագմանը վրայ չէին խաբուիր:

— Քան զայդ աւելի ստոյգ բան չկայ, պատախանեց Քէննըտի:

— Այդ վկայութեանց միջոցաւ է որ աշխարհանց տախտակներ շինելու փորձեր են. ուստի և ես ալ այս աշխարհացոյց տախտակաց մէկի մը վրայէն կ'ուզեմ ճամբանիս շարունակել, և ըստ պիտոյից ուղղել զայն:

— Միթէ բոլոր այս երկիրներս բնակիչներն, հարցուց ձոյ:

— Անտարակոյս, և գէշ բնակիչներ ունին:

— Կը կռահէի:

— Այդ ցիրուցան ժողովուրդները Նիամ-Նիամընդհանուր մականուանակոչութեամբ կը զուրցուին, և այդ անունն ուրիշ բան չէ եթէ ոչ անուանաստեղծութիւն մը. ծագման ձայնին նմանաձայնութիւն մըն է:

— Կատարեալ, ըսաւ ձոյ. նիամ, նիամ:

— Քաջդ ձոյ, եթէ դու այդ անուանաստեղծութեան անմիջական պատճառն ըլլայիր՝ այդ բանը շատ կատարեալ չէիր գտնար:

— Ի՞նչ կ'ուզես ըսել:

— Այս ըսել կ'ուզեմ թէ այդ ժողովուրդներն մարդակերք կը համարուին:

— Այդ ստոյգ է արդեզք:

— Շատ ստոյգ. նաև ըսեր էին թէ այդ բնիկներն չորքոտանեաց նման պոչ մը ունին. սակայն ապա իմացան որ ըսած յաւելուածն այն կենդանեաց մորթին կը վերաբերէր՝ որոնցմով ծածկուած են:

— Ալ գէշ. պոչը շատ ախորժելի բան մըն է մժեղները վորնտելու համար:

— Կարելի է ձոյ. սակայն այդ բանը առասպելաց կարգը դնելու է, ինչպէս

1 Աւանդութիւնը կ'ըսէ թէ այս ընուը կ'երեայ երբ մահմետական մը ռաքը վրան կը դնէ:

նաև Պռէօն- Ռուլէի ըսած շանագլուխ
մարդիկներն :

— Շան գլխով մարդիկ : Շատ աղէկ
բան, թէ հաջելու և թէ մարդակեր ըւ-
լալու :

— Սակայն եթէ ստոյգ բան մը կայ,
այդ ժողովրդոց վայրագութիւնն է, որ
մարդկային մսին անյագ սիրող են, և
միշտ զայն գտնելու հետամուտ :

— Կը խնդրեմ, ըսաւ ձոյ, որ իմ
անձնական անհատիս շատ չյօժարին :

— Դու տե՞ս, ըսաւ որասրդը :

— Ատանկէ, պարոն Տիք, Եթէ սովի
մը ժամանակ հարկ ըլլայ որ զիս ուտեն,
կուզեմ որ դու և իմ տէրս օգտուիք
ատկէ : Այլ այդ սևամորթները մնուցա-
նելու ծառայել . օն անդր. ամօթէս կը
մեռնիմ:

— Շատ աղէկ, քաջդ ձոյ, ըսաւ Քէն-
նրտի . որոշեալ է ուրեմն, դէսքին հա-
մեմատ յոյսերնիս վրագ կը դնենք :

— Չեզի ծառայելու պատրաստ, պա-
րոնայք :

— Ձոյ այդպէս կը խօսի, ըսաւ տոք-
դորը, որպէս զի իր վրան հոգ ունե-
նանք և աղէկ զիրցընենք զինքը :

— Գուցէ, պատասխանեց ձոյ. մարդս
շատ անձնասէր կենդանի մըն է :

Կէսօրուընէ ետքը, երկինքը գետնէն
ելած տաք միգով մը ծածկուեցաւ. մի-
գարակը հազիւ թէ կը ներէր գետնին
առարկաներն որոշելու. որով և վախ-
նալով որ չըլլայ թէ յանկարծ անա-
կընկալ ժայռի մը զարնուին, տոքդորը
ժամը հինդին ատենները դագարելու
նշանն տուաւ :

Գիշերն առանց պատահարի մ'ան-
ցաւ, սակայն հարկ եղեր էր այն սաս-
տիկ խաւարին պատճառաւ զգուշու-
թիւնը կրկնապատկել :

Երկրորդ առտուն մուսիմը ¹ արտա-
քոյ կարդի սաստկութեամբ չնշեց. հովն
օդապարկին ստորին կողմի խորշերուն

մէջ կը լեցուէր . սաստկութեամբ կը
ցնցէր այն յաւելուածը՝ որուն մէջէն
ուռեցընող խողովակները մոռուցած էր.
Հարկ եղաւ զանոնք չուաններու ամրա-
ցընել. դործ մը՝ որ ձոյ շատ ճարպ կու-
թեամբ գլուխ տարաւ :

Անով մի և նոյն ատեն նաև ստուգեց
որ օդապարկին բերանը բոլորովին գոց
էր :

— Այդ բանը, ըսաւ տոքդոր Ֆէրկը-
սըն, կրկին օգտակարութիւն մ'ունի
մեզի համար. նախ ամենակարեոր կա-
զի մը կորուստէն ազատ ենք . ապա,
մեր բոլորը դիւրավառ գօտի մը չենք
թողուր, զոր վերջապէս կրնայինք բը-
ունկցընել :

— Շատ ձախորդ պատահար մը ըլ-
լալու էր ճամբորդութեան, ըսաւ ձոյ :

— Միթէ գետինը գահավիժելու է-
ինք, հարցուց Տիք :

— Ոչ թէ գահավիժիլ, այլ կազը քիչ
քիչ այրէր պիտոր, ու մենք ալ կամաց
կամաց վար պիտոր իշնայինք . այդպիսի
մէկ պատահար. մը գաղղիացի օղա-
նաւորդ խաթունի մը հանդիպեր է, Պը-
լանչար տիկնոջ, որ իր օդապարկիր
բուրնկցուց հրախազութիւններ ընելով.
սակայն վար չինկաւ . և անտարակոյմ
չէր ալ սպաննուեր, եթէ իր նաւակը
ծըխնելոյզի մը չզարնուէր, ուսկից վար
նետուեցաւ :

— Յուսանք որ մեզի ասոր նման բան
մը չհանդիպի. ըսաւ որսորդը . մինչև հոս
մեր ճանապարհորդութիւնը վտանգա-
ւոր. չերենար ինծի, և պատճառ մըն
ալ չեմ քեսնար որ մեր նպատակին
հասնելու արգելք ըլլայ մեզի :

— Եւ ոչ ես, սիրեցեալդ Տիք, ար-
գելք մը կը տեսնամ. միւս կողմանէ ձա-
խորդ պատահարներն օդանաւորդաց
անխոհոմութենէն պատճառեր են, և
կամանոնց կազմարաններուն գէշ կեր-
պով չինուած ըլլալէն : Սակայն հաղա-
րաւոր օդաչու վերելքներու մէջէն, և ոչ
քսան պատահար կը յիշուին որպահ
պատճառած ըլլան: Ընդհանրապէս գետ-
եղերաց աւազակոյտներն ու չուելն ա-
ւելի վտանգներ կը ներկայացընեն :

¹ Մասսակարագի բառ է, և Հնդկաց կանոնա-
ւոր քամի կը նշանակէ, որ վեց ամիս շարունակ
մի և նոյն կողմէն կը չնէք, վեց ամիս ալ հակառակ
կողմէն :

Ուստի և նոյնպիսի դէպքի մէջ պէտք չէ
ինչ և իցէ զգուշութիւն զանց ընել:

— Ահա նախաճաշի ժամանակը հա-
սաւ, ըստ ձ'ոյ. պահծու մսով ու սուր-
ճով գոհանալու ենք, մինչև որ պարոն
Քէննըտի միջոց մը գտնէ ու մեզի երէոյ
աղէկ մսի կտոր մ'ընծայէ:

Կը շարունակուի:



Օր 'ի թրումզոյ.

Սրեւոն շարունակ ներկայութիւնն, և
օդուն հաստատուն պարզութիւնն՝ այս
գաւառաց ցորեկներուն մասնաւոր գե-
ղեցկութիւն մը կու տան: Երբ կէս զի-
շերուան մօտ արեն իր ընթացքը դէպ-
'ի հիւսիս կը շարունակէ, բոլոր եր-
կիրն՝ հարաւային գաւառաց պէս՝ երե-
կոյեան հանդարտութիւն մը կը վայե-
լէ: Երբ այս աստղս զարձեալ կը բարձ-
րանայ, կը կարծուի թէ օրն ալ նորէն
կը սկսի. և որչափ որ երթալով կը
բարձրանայ, նոր ջերմութիւն մը կը
տարածէ բոլոր երկրին վրայ: Պայծա-
ռութիւնը ամէն վայրկեան ալ նոյն է,
և երբ ջերմաշափը ցածնալով կը ծա-
նուցանէ թէ կէս զիշերը անցած է,
մարդ հազիւ կը կարծէ թէ իրիկունը
դացած է:

Սրեւոն տեսքին տուած աղղեցու-
թիւնը միշտ պարզ է, վասն զի այն ար-
խուր տպաւորութիւնն զոր կ'աղզէ մար-
դուս՝ ալեաց վրայ տարածուելով՝ հոս-
չի խոռվեր զմարդ. կէս զիշերէ քիչ մը
ետքը բոլոր բնութիւնը կը սկսի կա-
մաց կամաց կենդանանալ:

Գետնէն ամպեր կը բարձրանան, և
այլ և այլ ձևերով օդուն մէջ և լերանց
վրայ կը տարածուին. ծովուն մակե-
րեսին վրայ պղտիկ ալիքները կ'իմացը-
նեն որ հիւսիսէն եկող օդն աստիճա-
նաբար աւելի ուժով դէպ'ի հարաւ կը
մղուի: Արեգակն կը բարձրանայ հորի-
զոնին վրայ, իր ճառագայթները հետ-
զիետէ գետնին վրայ կ'աղղեն: Առուա-
կաց խոխոջիւնն՝ որք գեռ երկերը ծած-

կող ձեանց հալելովը կ'ուռին, զգալի
կերպով կ'ածի: Հիւսիսային քամին բո-
լորովին տիրած է. ալ չի վշեր մրրկի
պէս, այլշարունակ կարգաւորութեամբ
մը նեղուցին վրայ: Երեկոյին ժամը ու-
թին՝ ամենայն ինչ դարձեալ խաղաղա-
ցած է, ոչ օդուն մէջ ամալ կայ, ոչ հիւ-
սիսային քամի: Գիշերը՝ արեգական
քաղցր ջերմութենէ զատ բան չըզգար
մարդ:

Բևեռային շրջանակէն անդին եղած
ափանց վրայ՝ քիչ տեղ կայ որ թրոմ-
զոյի պէս վայելէ արևունակ ըն-
թացքը հորիզոնի վրայ՝ առանց ընդմի-
ջելոյ: Գրեթէ ուրիշ ամէն տեղ ժայռ մը
կամ բարձրաւանդակ մը քանի մը ժամ
անոր տեսպը կը խափանեն: Դարձեալ
երբ երևայ՝ այնպէս կու թուի ինչպէս
թէ հորիզոնէն նոր գուրս ելած ըլլար:
Երբ աներեսոյթ կ'ըլլայ, օդոյն բարե-
խառնութիւնն կը ցածնայ. Երբ առա-
ւոտեան հինդին կամ եօթին երևայ՝
ժամէ մը կը բարձրանայ: Այս բանս
տեսած էինք 'ի Լէտինկէն. բայց ու-
րիշ տեղեր երկու անգամ արևու ելլա-
լը կը տեսնեն, և երկու անգամ նոյն
առթիւ օդոյ բարեխառնութիւնը կը
զգան: Ի թրոմզոյ կէսօրէն ետքը մինչե-
երկուքը՝ ջերմութիւնը կ'ածի, և 43 կամ
44 աստիճանի կը հասնի. մինչև ութը
կամաց կամաց կը ցածնայ, յետոյ ա-
ւելի արագ մինչեւ 'ի 10 ժամ. անկէ ետև
դարձեալ քիչ քիչ մինչեւ կէսգիշեր. այս
ատեն 8 կամ 9 աստիճանի կը հասնի:
Բայց կէսգիշերուն և ժամմը միջոցնորէն
կը սկսի ածիլ: Արեգակն հոս երկու
ամիս հորիզոնին վրայ կը կերնայ, կամ
մայիսի կիսէն մինչեւ յուլիսի վերջը:

Խէ՛ՌՈՒԼՏ ՏԸ ՊԻՒԹ:



Տեսիլ գերմանիոյ.

Անտառաց բաղմութիւնն և տարա-
ծութիւն քաղաքականութեան գեռ նոր
սկսիլը կը ցուցընեն. հարաւոյ հին եր-
կերը՝ գրեթէ անծառ է, և արեգակն